

ԱՐԱՐԱՏ ԴԱՐԻՖՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


ՅԵՎ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐԲ ՅԵՐԿՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՍԱՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939



31 JAN 2018

ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻՔՅԱՆ

Հ Ա Յ Ո Ց Լ Ե Զ Ո Ւ

Ք Ե Ր Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Յ Ե Վ
Ո Ւ Ղ Ղ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Բ
Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ Դ Ա Ս Ա Ր Ա Ն Ի Հ Ա Մ Ա Ր



Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Վ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1939

Դասագիրքը կազմելուն ղեկավարել է Ն. ՄԱԶՄԱՆՅԱՆԸ

А. Гарбия
АРМЯНСКИЙ ЯЗЫК
Грамматика и правописание.
Учебник для 2-го класса.
Гиз. Арм. ССР, Ереван, 1939




11-2840691

Պատկերք.



1. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ո՞վ ի՞նչ է անում.



Ուսուցիչը բացատրում է:
Սշակերանները լսում են:

Սյտանդ կա յերկու նախադասութիւն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. Կազմեցէք յերեք նախադասութիւն.

- Արան (ի՞նչ է անում)
- Սեզան (ի՞նչ է անում)
- Բանվորը (ի՞նչ է անում)
- (Կարգում է, գրում է, աշխատում է)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2: Կազմեցէք յերեք նախադասութիւն.

- (ո՞վ) գրում է:
- (ո՞վ) խաղում է:
- (ո՞վ) վազում է:
- (Արփիկը, Շուշիկը, Շողիկը)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3: Լրացրէք նախադասութիւնները.

- Ձին արածում է (վորտե՞ղ):
- Կատուն բռնում է (ի՞նչ):
- Մեղուն շինում է (ի՞նչ):
- (դաշտում, մուկ, մեղր)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4. Լրացրէք նախադասութիւնները.

- Սշակերանները խմբերով դնում են (ո՞ւր):
- Ուսուցիչը դասարանում բացատրում է (ի՞նչը):
- Հասմիկն ու Սեզան դաշտում (ի՞նչ) են քաղում:
- (գլրոց, դաս, ծաղիկ)

Կարգալիս նախադասութիւն վերջում դա-
գար ենք տալիս: Գրելիս նախադասութիւն
վերջում դնում ենք վերջակետ: Վերջակետից
հետո սկսում ենք մեծատառով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5: Արտագրեցեք և զրեք վերջակետը.

Աղյուսը յեկամ սրբերը հասան Անրեւ-
նները գեղնեցին Կոյրնարեւոյցունը հասիս
խամ և բերիլ թուշունները չկամ են գեպի
գրամ յերկիրներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6: Կարդացեք և ասացեք՝ Պետիկը
ճիշտ է բացատրում վերջակետը.



ՊԵՏԻԿԻ ՎԵՐՉԱԿԵՏԸ

Պետիկը նստեց դասը սովորելու: Մեկ էլ մայրը նը-
կատեց, վոր Պետիկը գլուխը զրել է սեղանին ու ննջում է:
— Պետիկ ջան, ինչու դասդ չես սովորում, — ասաց
մայրիկը:


— Վերջակետի յեմ հասեր, մայրիկ, — պատասխանեց
Պետիկը, — ուսուցիչն ասաց՝ յերբ վերջակետի համես,
հանդատացիլ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 7: Արտագրեցեք: Վերջակետից հետո
չմոռանաք սկսել մեծատառով.

Մենք բոլորս սիրում ենք մեր Խորհրդային հայրենիքը:
Կարմիր սահմանապահները պաշտպանում են մեր
սահմանները:

Բոլորս ցանկանում ենք պիսներ դառնալ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 8: Ուշագիւր կարդացեք: Յուրաքան-
չյուր նկարի համապատասխան գտեք մի նախադասութիւնը:



ՀԵՐՈՍ ՏՂԱՆ

Սլաքավարի փորդի Մաքոն սուսգում եր յերկաթուղու
գիծը: Հեղեղը մի տեղում փչացրել եր գիծը: Մաքոն լսեց
հեռվից մտեցող գնացքի ձայնը: Մաքոն անմիջապես իր
կարմիր վզկապով մի զրոշակ պատրաստեց: Կարմիր զրո-
շակը ձեռքին նա կանգնեց գծի մեջտեղը: Մեքենավարը
նկատեց: Նա կանգնեցրեց գնացքը Մաքոյից մի քանի
քայլ հեռու: Հերոս տղան գնացքը փրկեց խորտակումից:

2. ԲԱՌ ՅԵՎ ՎԱՆԿ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 9: Գտեք՝ քանի բառ կա այս նախադասության մեջ.

Մեծ սպանն սպիտակ
Դաշտերն առավ ձյունի տակ:

Բառերը լինում են միավանկ և բազմավանկ:
Միավանկ բառեր՝ պատ, քար, տուն: Բազմավանկ բառեր՝ կատու, ծաղիկ, դասարան:


ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 10: Անդիր սովորեցե՛ք: Արտագրեցե՛ք և հաշվեցե՛ք միավանկ բառերը.

Այնպես հուզվեց այն մանկիկը՝
Ուզեցեկունին ժպտերես,
Յերբ իր ձեռքի փունջ ծաղիկը
Առաջնորդին նվիրեց:



— Ընդունիր սերը մեր լերկրի,
Դու մեր արև, դու մեր հայր,
Այս անթառամ ծաղիկների
Անուշ բույրը կենսարար:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 11: Արտագրեցե՛ք և հաշվեցե՛ք բազմավանկ բառերը:



Կլիմ Վորոշիլովին
Նամակ գրեցի,
— Ընկեր Վորոշիլով, —
Այսպես սկսեցի:

— Յեղբայրս այս տարի
Բանակ ե գնում,
Դիտեմ, վաղուց ե նա
Դրան յերազում:

Ընկեր Վորոշիլով,
Վստահիր նրան.
Կմենի՛ չի թողնի,
Վոր մեզ վրա գան:

Վանկը կազմված է մեկ կամ մի քանի հնչյուններից:

Որինակ՝ ա-սաց:

Առաջին վանկը կազմված է մեկ հնչյունից ա:

Յերկրորդ վանկը կազմված է յերեք հնչյունից՝ սաց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 12: Արտագրեցեք: Հաշվեցեք ամեն մի վանկի հնչյունները.



հանդ ու այ-գի գար-դա-րուն,
 հով է խա-ղում դաշ-լի-րում,
 թրու-չուն-ներն են փեղ գո-վում.
 Դնչ նախ-շուն ես, լավ մա-յիս:

Պու կայ-րատ ես ման-կան պես,
 թրու-վր-ասան ու խորն-դե-րես,
 Գու-րով, շու-րով կը-բե-րես
 վաղց այ-խաղ-իքն այ մա-յիս:

3. ՀՆԶՅՈՒՆ ՅԵՎ ՏԱՌ

Հնչյունները լինում են ձայնավոր և բաղա-
 ձայն:

Ձայնավոր հնչյուններն են՝ ա, ե, ի, ո, ու,
ը, ընգամենը 6 հատ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 13: Հաշվեցեք, թե ամեն մի բառ քանի՞ ձայնավոր ունի:

Անդիք սովորեցեք ձայնավորները.




Գարունը յեկավ: Որը տաք էր, արևը վառ:
 Մեղուները փեթակից դուրս յեկան:

Մեղուները դաշտում ու այգում բացված ծաղիկների բաժակներից կուշտ կերան, ապա ուրախ-ուրախ՝ վերադարձան փեթակը:

Չայնավորներից բացի մյուս բոլոր հնչյունները բաղաձայն են:

Բաղաձայն հնչյուններ՝ բ, վ, դ, ղ, թ, ժ, լ, լա, ծ, կ, հ, ճ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ու, ս, վի, տ, բ, ց, փ, բ, Փ, ընդամենը 30 հատ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 14: Արտազրեցեք: Հաշվեցեք, թե ամեն մի բառ քանի բաղաձայն ունի:



խոնարհ ու հեղ
մի հոգնամ յեղ,
Արդոն ուսին
Եաներ պային
մի իրիկուն
Պայիս եր գուն:

Հնչյունի նշանը կոչվում է գիր կամ տառ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 15: Կարդացեք: Գտեք հանելուկը:
Վորոշեցեք, քանի տառ ունի ամեն մի բառ.

Չորս յեղբայր են,
Ամեն տարի
Յերկրի վրա
Ման են գալի:

Տառերը լինում են մեծատառ և փոքրատառ:
Մեծատառը լինում է միայն բառասկզբին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 16: Արտազրեցեք և ընդգծեցեք մեծատառերը:



ՎՈՋՆԻՆ ՈՒ ՆԱՊԱՍՏԱԿԸ

— Ի՛նչ ազեղ ու ծակծկող շորեր ունես, բարեկամ, —
ասաց նապաստակը վոզնուն.

— Ճիշտ է, — պատասխանեց վոզնին, — բայց իմ փշերն
ինձ ազատում են շների ու գայլերի ատամներից: Քո մոր-
թին ել քեզ ազատում է:

— Վնչ: Ինձ աղատում են իմ արագավազ վոտները, —
պատասխանեց նապաստակը:

Տառերի ընդունված շարքը կոչվում է այբուբեն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 17: Արտագրեցեք մեծատառերը.

Այբուբեն

Ա, Բ, Գ, Դ, Զ, Ե, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ, Ծ, Կ, Հ, Ձ, Ղ, Ճ, Մ, Յ, Ն, Շ, Ո, Զ, Գ, Զ, Ռ, Ս, Վ, Տ, Բ, Ծ, Ս, Ռ, Փ, Գ, Ֆ:

Ա ա, Բ բ, Գ գ, Դ դ, Ե ե, Զ զ, Ը ը, Թ թ,
Ժ ժ, Ի ի, Լ լ, Խ խ, Ճ ճ, Կ կ, Ը ը, Զ զ, Գ գ,
Զ զ, Մ մ, Յ յ, Ն ն, Շ շ, Ո ո, Զ զ, Ս ս,
Վ վ, Տ տ, Բ բ, Ծ ծ, Ս ս, Ռ ռ, Փ փ, Գ գ, Ֆ ֆ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 18: Արտագրեցեք փոքրատառերը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 19: Անգիր սովորեցեք ալբուբենը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 20: Արտագրեցեք այբբենական
կարգով.

զ, թ, ի, ժ, դ, գ, ե, բ, ը, ա, խ, լ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 21: Արտագրեցեք բառերը իրենց
առաջին տառերի այբբենական կարգով.

Արամ, ծաղիկ, թռչուն, բզեզ, գարուն, դանակ, ըն-
կեր, զանգ, ինչ, եմին, լոր, խաղող:

Առանձին գործածելիս Յ հնչյունն ունեցող
յեվ բառը կարճ գրվում է և:

Այս և գիրը մեծատառ չունի, դրա փոխա-
րեն գրվում է Յեվ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 22: Արտագրեցեք, ընդգծեցեք և
գիրը:

Մ Ե Ղ Ո Ի

Առավոտից յես շրջում եմ

Յեվ դաշտ, և՛ սար, և՛ այգի,

Յես մի փոքրիկ ժիր անդամս եմ

Մեր համերաշխ համայնքի:

Բառի մեջ եվ կամ յեվ հնչյունների փոխա-
րեն գրվում է և:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 23: Արտագրեցեք և ընդգծեցեք և
գիրը: Քանի հնչյունի նշան է:

Արև, արև, յեկ, լեկ,

Զիզի քարին վեր յեկ,

Սև-սև ամպեր, հեռացեք,

Արևին ճամփա տվեք:

Յերկու բաղաձայնների միջև լավող ը ձայ-
նավորը սովորաբար չի գրվում: Որինակ՝ լավում
է զըլուխ, բայց գրվում է զլուխ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 24: Արտազրեցեք և ընդգծեցեք այն բառերը, վորտեղ լսվում ե ը, բայց չի գրված:



Մանուշակը կապույտ գլխով,
Թաք ե կացել թփերի տակ,
Զանգակիկը մեղմ ճոճելով
Թերն ե ներկել կապույտ-սպիտակ:
Ճերմակ հագած հեղ Շուշանը
Փսփսում ե գեփյուռի հետ,
Թերը փռած Մարգարիտը
Որորվում ե առաջ ու յետ:

4. ՏՈՂԱԴԱՐՁ


Բազմավանկ բառերը կարելի յե բաժանել վանկերի:

Որինակ՝ ա-շա-կերտ, Սա-հա-սար:

Վանկերի բաժանելիս բաղաձայնների միջև լսվող ը ձայնավորը գրվում ե:

Որինակ՝ գը-լուխ, փըս-փը-սալ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 25: Արտազրեցեք՝ վանկերի բաժանելով:



ԿԱՄԱԿՈՐ ԱՅԾԵՐԸ

Յերկու կամակոր այծ իրար հանդիպեցին մի նեղ կամրջի վրա: Այծերից վոչ մեկը չուզեց մյուսին ճանապարհ տալ: Նրանք ճակատ ճակատի զարկեցին, իրար գլուխ պատռեցին և վերջը յերկտով ել թրմփացին շուրջ:

Յերբ ամբողջ բառը տողում չի տեղավորվում, մեկ կամ մի քանի վանկ տանում ենք հաջորդ տողը: Դա կոչվում ե տողազարձ:

Որինակ՝ Ար-շանուշ կամ Արշա-հուշ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 26: Ցույց տվեք, թե քանի տեսակ կարելի յե տողազարձ անել հետևյալ բառերը.

Յերեխաներ, ճանապարհ, անտառներ, արթնանալ, ամենամոտ, արձակեցեք, դեղատուռ, կարկաչահոս:

11-2840690



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 27: Արտագրեցեք վանկերի բաժանելով:



ՆԱՄԱԿ ՎՈՐՈՇԻՂՈՎԻՆ

(Նարունակուքյուն)

Նա դիպուկ խփող է,
Ինքը կտեսնես,
Յերբ թշնամու դեմ
Գնալ հրամայես:

Իսկ յեթե մեռնի
Իմ յեղբայրը մեծ,
Սյդ մասին իսկույն
Նամակ կգրես:

Ընկեր Վորոշիլով,
Շուտով բոյ կառնես,
Յեղբորս փոխարեն
Դիրքում կկանգնես:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 28: Արտագրեցեք և յուրաքանչյուր բառ բաժանեցեք տողադարձի նման՝ ձեր ցանկացածի պես.
ՅԵՐԿՈՒ ԽՈՓ

Միեմ' սույն յերկարի կրորից դարբնացում
չիմամ կյին յերկու խոփ: նրանցից մեկն
խակույն գնաց աշխատանքի, իսկ մեկը
յերկար ժամանակ ընկամ եր դարբնացում:

Մի անգամ այդ յերկու խոփերը կրկին
պատահեցին իրար: Աշխատող խոփը ար-
ձագի պես փայրում եր, իսկ պարսպ մի-
նացածը սեխացած եր ու ժանգոտ պարսպ:

5. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ը ձայնավորը

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 29: Վորոշեցեք՝ վճիռ հնչյուններից առաջ լավող ը-ն չի գրվում:

Ընկեր Ստեփանը վերադարձավ Ստեփանավանից՝ ժամը իննին սկսվում է մեր դասը: Մի շտապիր, սպասիր մի քիչ՝ զրոսանքի դնանք: Զգույշ լեղիր արտագրելիս, ստորակետ բաց չթողնես: Սաուզման ժամանակ գերազանց՝ զնահատական ստացա:

Բառասկզբին ը չի գրվում ստ, սպ, սփ, սթ, սկ, գգ, գբ, շտ, սք, բաղաձայններից առաջ:

այ, ոյ, ույ, եյ, յա, յու, յե:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 30: Վճր բաղաձայններից առաջ լավում ե ը բայց չի գրվում:

Ընդգծեցէք:

Սկիբբ, սկյուռ, ստվեր, ստանար, ստացական, ստորագրություն, ստուգել, սթափվել, սպասել, սպառել, սպիտակ, սքանչելի, սփոփել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 31: Վճր բաղաձայններից առաջ ե լավում ը բայց չի գրվում:

Ընդգծեցէք:

Զբաղվել, զբոսնել, զգալ, զգաստ, զգոն, զգեստ, զգուշ, շտապ, շտեմարան:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 32: Արտագրեցէք և ավելացրէք բաց թողած առւը.

Վորսորդը մի գալլ — պանեց: — պիտակ սավանը ծածկել ե դաշտ ու ձոր: — տեփանն ու — պանդարը — բոսանքի լեն — տապում: — գուշ, — գեստդ չպատառոտես: — կսվել են մեր — տուգումները:

(սպանեց, սպիտակ, Ստեփան, Սպանդար, զբոսանք, շտապել, զգուշ, զգեստ, սկսել, ստուգում):

Տողադարձի ժամանակ բառասկզբին լավող ը-ն գրվում ե: Որինակ՝ ըս — պասել, ըզ — բոսնել

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 33: Գտէք սպ, ստ, սկ, սթ, գբ, գգ, շտ, բաղաձայններով սկսվող բառեր և տողադարձ արեք: Որինակ՝ ըշ-տեմարան, ըս-պիտակ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 34: Արտագրեցէք այն բառերը, վորոնք ունեն այ, ոյ, ույ, եյ, յա, յու, յե, յերկհնչյունները:



ԽՍ.ՂՈՂԻ ԱՅԳՈՒՄ

Մի ամառ, յերբ դեռ փոքր եյի, յես ու քույրս հյուր ելինք գնացել քեռուս արդին: Ամեն ինչ այդտեղ նոր եր մեզ համար: Ամբողջ որը թափառում եյինք այգում, իսկ յերեկոյան հոգնած ու անուշ քնում եյինք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 35: Գտեք և ավելացրեք այ, ույ
յա, յու, յե, յերկհնչյուններ ունեցող բառեր:

Մայր

բույս

վոսկյա

պուռն

յեզ

Յ ՁԱՅՆԱԿԱՊԸ

Ա, ե, ո, և հաջորդ ձայնավորների միջև
գրվում է յ, յեթե լավում է:
Այդ յ-ն կոչվում է ձայնակապ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 36: Ստուգեցեք՝ վճր ձայնավորներն
ե կապում յ-ն:

Նայիր, Կարոյի պայուսակը Միքայելի նստարանի
վրա յե:

Հայելին թեյի սեղանին է: Նոյեմբերն աշնանային
ամիս է:

յ ձայնակապը հաջորդ ձայնավորին միանա-
լով փանկ է կազմում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 37: Վանկերի բաժանեցեք հետևյալ
բառերը:

մայիս, Արամայիս, նայարան, մարոյի կայկիլն:

Ասիայի պայուսակը, նոյեմբեր ամիսը:

Իա, իե, իո, իու, իի, յերկձայնավորների
միջև յ չի գրվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 38: Արտագրեցեք և ընդգծեցեք իա,
իե, իո, իու, իի, յերկձայնավորները:

Գաբրիելը և Գանիելը միասին են պարապում: Արամը
և Վիկտորիան երսկուրսիա գնացին: Ընկ. Ոֆելիան մեր
դաստիարակն է: Մոսկվան Խորհրդային Միության մայրա-
քաղաքն է: Պիոներ Վաչիկը գերագանցիկ է:

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ
դ—թ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 39: Արտագրեցեք և անգիր սովորե-
ցեք հետևյալ բառերը, վորոնց մեջ արտասանվում է թ,
բայց գրվում է դ:

Վարդ	Խորհուրդ
Կարդալ	Խնդրել
Մարդ	Թաղեվոս
Վարդան	Յերկրորդ
Ջարդ	Յերրորդ
Ժողովուրդ	Չորրորդ
Ոդ	Վորդ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 40: Արտագրեցէք: Լրացրէք բաց թողնված տառերը.

Վար — անը, յերկրորդ — դասարանումն է:

Թա — եփուր կար — ում է մի նոր գիրք:

Մայիսին բացվում է վար — ը:

Խորհր — ային ժողովուրդ — ը յերջանիկ է:

ձ—ց

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 41: Արտագրեցէք և անգիր սովորեցէք հետևյալ բառերը, վորոնց մեջ արտասանվում է ց, բայց գրվում է ձ:



խուրձ

բարչ	դեղչ
արչ աչքուրդ	դարչ
համարչակ	որսավարչ
վարչ	վերսպարչ
բարչի	



արձան



դերձակ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 42: Արտագրեցէք վերևի ցուցակն այբբենական կարգով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 43: Արտագրեցէք և բառայուցակի-ով ոգնությամբ լրացրէք բաց թողնված տառը:

Բար — ը պահիր պիտներական պատիվդ:

Վերագար — ին տեսա մի գեղեցիկ ար — ան:

Ար — ա կուրգը վերջացավ: Դեր — ա կը կարում է:

Բար — ը փափուկ է: Դեղ — ը համեղ միրգ է:

Ղ—չ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 44: Արտագրեցէք և անգիր սովորեցէք հետևյալ բառերը, վորոնց մեջ արտասանվում է ջ, գրվում է ջ:



արջ



աղջիկ

վերջ
առաջին
աղջիկ
առողջ
վողջույն
զղջալ

թրջել
մրջուն
աջ
մեջ
իջնել
—



մրջուն



չղջիկ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 45: Արտագրեցեք այբբենական կարգով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 46: Արտագրեցեք և վերևի բառացուցակի ոգնությամբ լրացրեք բաց թողնված տառը:

Առաջին դասարանում աղ-խմեք շար
կան: Արշակունյի վերին որը կրկնեցի
դասերս: Ար-ի Գրությունը թր-եց իր վոպր:
Պարզում մր-յանի բույն փեսա:

Բ—Վ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 47: Արտագրեցեք և անգիր սովորեցեք հետևյալ բառերը, վորոնց մեջ արտասանվում է փ, բայց գրվում է ք,

յերբ
նուրբ
յերեսարբիչ
վորբ
հարբել

հարբուխ
խարբել
համբույր
սրբել
չակորբ



դարբին

Գ—Ք

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 48: Արտագրեցեք և անգիր սովորեցեք հետևյալ բառերը, վորոնց մեջ արտասանվում է ք, բայց գրվում է զ.

յերգ	ոգնել
կարգ	հոգնել
կարագ	հոգնակի
մարագ	պարգև
շոգ	Մարգիս
անգամ	Գրիգոր
ուրագ	Մարգարիտ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 49: Արտագրեցեք վերևի ցուցակը այբբենական կարգով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 50: Արտագրեցեք և բառացուցակի ոգնությամբ լրացրեք բաց թողնված տառը:

Մի յեր — գիտեմ լես աննման
Հզոր մուրճի թափի նման:
պար — եվուհին ո — նում է Մար — արիաին:
Ամառը շո — է լինում: Մար — իսը հո — նել է:
Հյուննը ուրա — ով տաշում է:

6. ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 51: Ավերացրեք ուրիշ առարկաների անուններ:

Ի՞նչ. — մաշիտ, տուն, ծառ, խոտ...

Ի՞նչ. — ձի բադ, հավ, արջ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 52: Ալիսացրեք ուրիշ առարկաների անուններ.

Ո՛վ.— աշակերտ, բանվոր, ուսուցիչ...

Ո՛վ.— հայր, տատ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 53: Գտեք և գրեցե՛ք այս բոլոր առարկաների անունները:




ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 54: Կարգացե՛ք և գտե՛ք առարկաների անունները:

Գ ի Ր Ք

Ասած տեսնեմ,
Իմ սիրուն գիրք,
Քեզ կսիրեմ,
Քան խաղ ու միրգ:
Ես ի՛նչեք կան
Մոցիդ մեջը.
Ճստան մկնիկ,
Վոսկի ձկնիկ


Թիթեռ, ըզբզ,
Իսկ ծաղկի պեռ,
Բաղ ու պուլիկ,
Գառն ու ուլիկ,
Կաքավ ու լոր,
Շլոր, սալսր...
Ասած պատմի՛ր
Իմ ազանջին,



Դու ծանոթ ես
Ամեն ինչին:
Դե, շուտ պատմի՛ր,

Իմ խերք գիրք,
Քեզ կսիրեմ,
Քանխաղ ու միրգ:

ԱՌՍԱՐԿԱՆԵՐ



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 55: Գրեցեք հետևյալ տեսակի առարկաների անուններ.

- Մարդիկ. — ուսուցիչ, տղա...
- Բույսեր. — սինձ, մանուշակ...
- Թռչուններ. — բաղ, ծիծեռնակ...
- Մրգեր. — տանձ, խաղող...


Մարդը, կենդանին, բույսը, միրգը, բոլոր իրերը կոչվում են առարկա:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 56: Հարցերի փոխարեն դրեք առարկաների անուններ:

- Աշակերտը գրում է (ինչո՞վ)... (ի՞նչ)...
- Հյուսնը սղոցում է (ի՞նչով)... (ի՞նչ)...
- Տատը կանչում է (ո՞ւմ)...
- Շուշիկը հանդիպում է (ո՞ւմ)...
- Պապը նամակ ստացավ (ո՞ւմից)...

Առարկաների անունները պատասխանում են հետևյալ հարցերին.
ո՞վ, ի՞նչ, ո՞ւմ, ի՞նչի՞, ի՞նչի՞ն, ումի՞ց, ի՞նչի՞ց, ումո՞վ, ի՞նչո՞վ, ի՞նչո՞ւմ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 57: Կարդացեք և ասացեք, թե ի՞նչ հարցերի յեն պատասխանում առարկաների անունները:



ԻՆՉ ՅԵՂԱՆԱԿ Ե

Յես վոսկեղոծում եմ արտերը և կուացնում հասկերի գլուխները:

Յես կախ եմ անում այգիներում տանձ, խնձոր, դեղձ ու խաղող:

Յես ճուտիկներին թոցնում եմ բներից և հանում մանուկներին զով անտառը, աղբյուրների մոտ, ազաա սարերը:

Մի՞թե ինձ չեք սիրում:

7. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԹԻՎԸ

Առարկաները լինում են յեղակի և հոգնակի:

Յեզակի (մեկ առարկա)



տանձ



թիթեռ

Հոգնակի (մեկից ավելի առարկաներ)



տանձեր



թիթեռներ

Յեզակին ցույց ե տալիս մեկ առարկա:
 Հոգնակին ցույց ե տալիս մեկից ավելի նույն տեսակի առարկաներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 58: Լրացրեք, կետերի տեղը զբերով հոգնակիները:

Մար	Մարեր
Քար	• • • •
Պատ	• • • •
Ճուտիկ	• • • •
Մանուկ	• • • •

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 59: Վորոշեցեք՝ առարկա ցույց տվող բառը յեզակի՞ յե, թե՞ հոգնակի:




ՎՈՐ ՅԵՂԱՆՍԿՆ Ե

Յես գույն-գույն ներկում եմ ծառերը և ճամբա դնում թռչուններին դեպի սաք յերկիրները: Յես լցնում եմ մառանները մրգերի կախաններով, չիր ու չամչով: Յես բաց եմ անում ձեզ համար դպրոցի դռները:
 Միթե ինձ չեք սիրում:


Հոգնակին կազմելիս միավանկ բառերին ավելացնում ենք եր, իսկ բազմավանկ բառերին՝ ներ վերջավորություն:




վարդ



վարդեր



բանվորներ



բանվորներ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 60: Կազմեցե՛ք հետևյալ միավանկ բառերի հոգնակին. Յեզակի

Պր _____

գեղ _____

շոբ _____

համ _____

ույժ _____

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 61: Կազմեցե՛ք հետևյալ բազմավանկ բառերի հոգնակին:

այիտներ _____

աշխարհ _____

աղցիկ _____

պոլս _____

ճանուկ _____

խրեխա _____

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 62: Վերջեցե՛ք՝ առարկա ցույց տվող բառի հոգնակին ընչ վերջավորություն ունի:



ՎՈՐ ՅԵՂԱՆԱԿՆ Ե

Յես բերում եմ պայծառ արև ու տաք որեր:

Յեր գալիս եմ, դաշտերն ունենում են դալար խոտեր,
խակ անտառները կանաչ տերևներ: Յես բերում եմ ծաղիկ-
ներ ու թիթեռներ, բերում եմ սիրուն թռչուններ, վորոնք
գալիս են հեռու յերկիրներից:


Միթե ինձ չեք սիրում:

Ճ. ԱՌԱՐԿԱՅԻ ՎՈՐՊԻՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 63: Գրեցեք հարցերի պատասխան-
ներն ըստ նկարների:

Ինչպիսի սեղան

Ինչպիսի մատիտ



(Փոքր մեծ կարճ լերկար)

Փոքր, մեծ, կարճ, լերկար, ջանասեր, ծուլ
և նման բառերը ցույց են տալիս առարկայի
վորպիսությունը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 64: Կետերի տեղը դրեք վորպիսու-
թյուն ցույց տվող բառեր

. դաշտ արտ
. կով գառնուկ պիտներ
տղա ուլիկ աղջիկ

Վորպիսություն ցույց տվող բառերը պա-
տասխանում են ինչպիսի հարցին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 65: Արտագրեցեք և ընդգծեցեք
վորպիսություն ցույց տվող բառերը:



Մ Ա Յ Ի Ս

Մը ու արվան վան մայիս,
Դու ամենից լավ ամիս,
Կյանք ու արև ես տալիս.
Ի՞նչ սիրուն ես, ջան մայրս:


ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 66: Ինչպիսի հարցի միջոցով գտեք
առարկայի վորպիսությունը ցույց տվող բառերը և ար-
տագրեցեք:

Ե՛յ, կանաչ ախպեր,
Ե՛յ, ճանաչ ախպեր,
Արի, քեզ հեռ բեր,
Արևի շողեր:
Բեր անուշահոտ

Ծիւ, ծաղիկ ու խոտ,
 Կարկաչուն վտակ,
 Յերկիրնք կապուտակ,
 Խատուտիկ հավքեր,
 Զրնգան յերգեր,
 Գառների մայուն,
 Խաղ, ուրախութիւն...
 Ե՛յ, կանաչ ախպեր,
 Ե՛յ, ճանաչ ախպեր:

9. ԱՌԱՐԿԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ


ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 67: Կեանքի տեղը գրեցեք, թե ի՞նչ է անում աշակերտը:



Գուրգենը... Գուրգենը... Գուրգենը... Գուրգենը...

Խաղում ե, սովորում ե, ուտում ե, քնում ե
 բառերը ցույց են տալիս առարկայի գործողութիւնը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 68: Գրեցեք, թե ի՞նչ է անում ամեն մեկը:



Գործողութիւնն ցույց տվող բառերը պատասխանում են ի՞նչ է անում, ի՞նչ արեց, ի՞նչ անել հարցերին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 69: Շարունակեցեք բառացանկը, ավելացնելով առարկայի գործողութիւնն ցույց տվող բառեր:

- Ի՞նչ է անում: Գրում ե, լսում ե...
- Ի՞նչ արեց: Գրեց, լսեց...
- Ի՞նչ անել: Գրել, լսել...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 70: Արտագրեցեք և առարկայի գործողութիւնն ցույց տվող բառերի տակ զիծ քաշեցեք:


ԾԻՏԻԿԸ

Յերգում եմ, յերգում
 Յեվ ուրախանում,
 Վոր իմ յերգերով
 Աշխարհն է հրճվում:



Իմ գործն ե՛ անվերջ
 Յերգել ու յերգել,
 Ազատ ու անհոգ
 Վեր ու վար ճախրել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 71: Ի՞նչ հարցի յեն պատասխանում
 գործազուրկունն ցույց տվող բառերը.



ՁՄ Ե Ռ

Ձյուն ու ցուրտ լեկավ
 Առու, գետ լսեց.
 Իբ սպիտակ գորգը
 Ձմեռը փռեց:

Ձյունը ծնկահար
 Նստեց մեծ ճամփին,
 Սպիտակ հյուսերը
 Կիտեց գետափին:
 Ծառեր ու թփեր
 Ձմեռն արծաթեց,
 Սար ու ձոր ընկավ
 Կալեց ու կապեց:

10. ՄԵԾԱՏԱՌ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 72: Արտագրեցեք:

Նյարիկ, Անուշ, Աչիկ, Խորեն, Արմիկն,
 Արդանին, Անուշին ուր են:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 73: Քանի՜ անուն կասես՝

գետի. Վոլգա. . . .
 սարի. Արագած . . .
 գյուղի. Քանաքեռ. . .
 քաղաքի. Յերևան. . .
 տղայի. Արամ. . .
 աղջկա. Հասմիկ. . .

Գրելիս մարդկանց, գետերի, լճերի, գյուղերի, քաղաքների, փողոցների, խրկիրների անունները սկսում ենք մեծատառով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 74: Գրեցեք յերեք տղայի անուն,
չորս աղջկա անուն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 75: Կազմեցեք հինգ անուն և ազգա-
նունների ցուցակ:

1. Հրաչյա Հովսեփյան
2.
3.
4.
5.

Գրելը սկսում ենք մեծատառով: Վերջակե-
տից հետո ել սկսում ենք մեծատառով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 76: Գրեցեք ձեր հասցեն հետևյալ
որինակով:

շամարյվի շրգան
 Պարդապու գյուղ
 Իեմսիկ շարիբյանին

Հերեմյան
 Խաչատրյան փողոց N45
 Զուլբրա շարիբյանին

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 77: Լրացրեք այս անկետան:

1. Անուն
2. Հայրանուն
3. Ազգանուն
4. Բնակության տեղը (գյուղ կամ քաղաք).
5. Փողոց և №

11. ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 78: Վճր բառն և հարց արտահայտում:

- Ծիար ծախն հարցրեց.
- Ո՞ւր ե ճուտդ, ծիտ:
- Ճուտը գլուխը բնից հանեց և
- պատասխանեց.
- Ծիտ.



Հարց արտահայտող բառի վերջին ձայնավորի վրա դրվում է հարցական նշան (°)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 79: Կարգացեք, գտեք, թե վիրուսը են հարցնող բառերը, ի՞նչ նշան ունեն իրենց վրա:

Յերգում եր մարիկ կկու՞ն:
 Մին ել ընր՝ ազվեսն եկա՞վ:
 — Ես սարը իմն ե,
 Ես ծառը իմն ե,
 Ծառում փչակ կա,
 Փչակում մի բուն,
 Ես ո՞վ ե յեկել
 Տիրացել թաքուն:
 Ախ դու կկո՞ւ, հիմա՞ր կկու,



Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
 — Յերեք հատ ձագ, ազա՛ Աղվես:
 — Յերեք հատ ձագ ցույց կտամ քեզ:
 Ու չէս ասել, դու, անամո՞թ,
 Մինը ծառա զրկես ինձ մոտ:
 Զգի շուտով մի հատը ցած,
 Թե չե կացինս հրեն սրած,
 Գնամ բերեմ,
 Ծառը կտրեմ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 80: Հետևյալ հարցերին պատասխանեցե՛ք լրիվ նախադասություններով:

Ի՞նչ ե անունդ:
 Ի՞նչ ե ազգանունդ:
 Վ՞որ գյուղից կամ քաղաքից ես:
 Քանի՞ տարեկան ես:
 Վ՞որ առարկայից գերազանց կամ լավ գնահատական ունես:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 81: Տրված պատասխանների համար գրեցե՛ք լրիվ հարցեր:

.
 Կարմիր բանակն ե պաշտպանում մեր յերկերը:

 Ուզում եմ լինել ոգաչու:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 82: Գտեք, վ՞որ բառերն են շեշտված արտասանվում. ի՞նչ նշան կա նրանց վրա:



Կարգահայ իմ խելոք մանուկ,
 Կարգահայ, գրիր տարին բոլոր
 Կարգացողի խելքն եւ կտրուկ,
 Միտքը պայծառ ու լուսավոր:

Հրաման, դիմում կամ պահանջ արտահայտող բառերի վերջին ձայնավորի վրա գրվում է շեշտ ('):

Շեշտ ունեցող բառն ուժեղ եւ արտասանվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 83: Արտագրեցեք և ընդգծեցեք շեշտ ունեցող բառերը:

Արևը.— Սիրուն աղջիկ, ի՞նչ դրկեմ քեզ:

Աղջիկը.— Յես ծաղիկներ կուզեմ պես-պես:

Արևը.— Ա՛յ աղբյուրներ, այ գետակներ

Մառցի տակին քնած եք դեռ:

Դուրս յեկեք, դուրս,

Շուռ գեպի լույս:



Նոր աշխուժով

Ու նոր ուժով

Կարկաչեցեք

Ու կանչեցեք

Հողում քնած սիրուններին,

Ծաղիկներին ու ծիլերին.

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 84: Գտեք այն բառերը, վորոնք լերկար են արտասանվում. ի՞նչ նշան կա նրանց վրա:

Ծաղիկները.— Բարե՛վ, բարե՛վ, կարմիր արև,

Ա՛խ, ի՞նչ լավ եւ դեպի վերև —

Ազատ, լմնյա, տանք,

Կապույտ, հստակ...


Արևը.— Սիրում եք ինձ...

Ծաղիկները.— Ա՛խ, եսպէս եմ սիրում, եսպէս,

եւ առանց քեզ չեմ ապրի յես...

Բառի յերկար արտասանվող վանկի վրա
դրվում է բացականչական նշան (˘)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 85: Արտագրեցեք և ընդգծեցեք բացականչական նշան ունեցող բառերը:



ԱՌԱՎՈՏ

Պայծառ արևը բարձրացավ յերկինք և վոսկեփայլ
ճառագայթները տարածեց յերկրի վրա:

Առաջին ճառագայթն ընկավ արտուտի վրա:



Արտուտը թփրտած, թափ տվեց թևերը, դուրս թռավ
բնից, բարձրացավ վեր ու վեր և սկսեց յերգել բարձրա-
ձայն. —

ՃիՎ, ճիՎ, ճիՎ, ճիլի-վիլի,

Ճիլի-վիլի, վո՛ւտ, վո՛ւտ, վո՛ւտ, ճր՛ուռ...

Հարցական նշանը, շեշտը և բացականչական
նշանը կոչվում են, առողանության նշաններ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 86: Կարգացեք և ցույց տվեք, թե
վ՞որ բառն ի՞նչ նշան ունի, ի՞նչպես պետք է կարդալ:



Յ Ե Ս

Ազոավը բռնեց մի խեցգետին և նստեց ծառին:
Խեցգետինն ուղեց ազատվել նրա կողից ու ասաց
նրան.

— Վոսկեհատիկ, ազոավ քույրիկ, ո՞վ է մեզնից կեղ-
տուտ:

Ազոավը սեղմեց կտուցը և կռուաց.

Դո՛ւ...

— Վոսկեհատիկ ազոավ քույրիկ, ո՞վ է մեզնից նախ-
շունը:

Ազոավը բացեց կտուցն ու կռուաց.

Յե՛ս...

Կտուցը բաց անելուն պես խեցգետինը կողից ըն-
կավ ջարը և ազատվեց:

Յ Ա Ն Կ

1. Նախադասութիւն	4
2. Բառ և վանկ	8
3. Հնչյուն և տառ	11
4. Տողադարձ	16
5. Ուղղագրութիւն	19
6. Առարկայի անուն	27
7. Առարկաների թիվը	31
8. Առարկայի վորպիսութիւն	36
9. Առարկայի գործողութիւն	38
10. Մեծատառ	41
11. Առողանութեան նշանները	43

Պատ. խմբագիր՝ Գ. Սեվակ
 Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
 Սրբագրիչ՝ Բ. Ղուկասյան
 Կոնտրոլ սրբագրիչ՝ Յե. Տ. Մինասյան

Գլխավիտի լիազոր՝ Վ—2054 Հրատ. 4910.
 Պատվեր 476. Տիրած 65.000.
 Թուղթ 62x94. Տպագրակ, 3 մամ.
 Մեկ մամուլում 24180.
 Հանձնված է արտագրութեան 13 մայիսի 1939 թ.
 Ստորագրված է տպագրութեան 25 հունիսի 1939 թ.

ՈՒՍՈՒՑԶԻՆ

Գործածելուց առաջ աշակերտների դասագրքերում ուղղել
 հետեւյալ սխալները. վորոնք հետեանք են սրբագրիչ Բ. Ղու-
 կասյանի անփութութեան:

Եջ	Տող	Տպված է	Պետք է լինի
14	6	Աա, Բբ, Գգ, Դդ, Զզ, Եե,	Աա, Բբ, Գգ, Դդ, Եե, Զզ
25	14	Մըջուն	Մըջուն
27	18	պար-եվուհին	Պար-եվուհին
48	9	թփրտած	Թփրտաց

ՀՀ Ազգային գրադարան



NL0928106

17 1939

ԳԻՆԸ 50 Կ.

ԿԱԶՄԸ 50 Կ.

206

11

28406

А. ГАРИБЯН

АРМЯНСКИЙ ЯЗЫК

Грамматика и правописание

Учебник для 2-го класса.

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.